



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 05 » « Ճարտք » 2020թ. № 94-ՉԿ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն նախարար Է. Գրիգորյանի մոտ 2020 թվականի փետրվարի 24-ին կայացած գործակարգավարական խորհրդակցության N 2 արձանագրության 1.2 կետի դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) 2020 թվականի փետրվարի 13-ի կառավարության նիստի օրակարգի 1-ին և 2020 թվականի փետրվարի 21-ի ֆինանսատնտեսական կոմիտեի նիստի օրակարգի 2-րդ հարցերի մասին նախարարին չզեկուցելու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,

2) Նահրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,

3) Մերի Բաբայան - Անձնակազմի կառավարման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 15 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:


5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

3/5/2020

X



ՎԱՀԵ ԶԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«05» մարտի 2020թ.
ք. Երևան